ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

1201, ք.Գավառ, Հ. Հակոբյան 21, ☎ (0-264) 2-34-50

N / 61-642/25

«05» 03 2025թ

Մարտունի համայնքի ղեկավար,

պարոն Հ. Հովեյանին

Առաջարկություն

Հարգելի՛ պարոն Հովեյան,

ՀՀ Գեղարքունիքի մարզի դատախազությունում պետական շահերի հայց հարուցելու լիազորության շրջանակներում, ուսումնասիրության է ենթարկել Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի բնակավայրի Գետափնյա 2-րդ փողոցի թիվ 22-րդ հասցեում գտնվող մարզադաշտի և դրանում առկա շինությունների նկատմամբ վարձակալության և սեփականության իրավունքի ձեռքբերման վերաբերյալ փաստաթղթերը, որի արդյունքում պարզել է, որ 1998 թվականի նոյեմբերի 3-ին, Մարտունու պետական նոտարական գրասենյակի պետական նոտար Ա. Ս. Ավետիսյանը, որպես Մարգո Արտաշի Հարությունյանի միակ ժառանգ է ճանաչել վերջինիս որդի Հարություն Գուրգենի Հարությունյանին և տրամադրել թիվ 1092 ժառանգության իրավունքի վկայագիր, ինչի արդյունքում 1998 թվականի դեկտեմբերի 21-ին, Մարտունի քաղաքի կենտրոնական հիվանդանոցի հարևանությամբ գտնվող 6,5 հա մակերեսով մարզադաշտի նկատմամբ

գրանցվել է վարձակալության իրավունք, 1980.55 քմ մակերեսով մարզադաշտի տրիբունայի նկատմամբ սեփականության իրավունք:

Մինչդեռ, համաձայն Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեից ստացված տեղեկանքի՝ նշված հասցեում Մարգո Արտաշի Հարությունյանի անվամբ պետական գրանցում առկա չէ:

2009 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 2590269 սեփականության իրավունքի վկայականով հիշյալ 6,5 հա մակերեսով մարզադաշտի նկատմամբ գրանցվել է վարձակալության իրավունք, իսկ 1980.55 քմ մակերեսով մարզադաշտի տրիբունան չափագրման արդյունքում դառնալով 1068 քմ, գրանցվել է սեփականության իրավունք փաստաթուղթ՝ ԳԴ/10024/02/09, 17.03.09 վճիռ:

Ուսումնասիրության արդյունքում հաղորդում է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 2-րդ մասի և 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով առերևույթ հանցանքների կատարման վերաբերյալ, որի կապակցությամբ ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Մարտունու քննչական բաժնում նախաձեռնվել է թիվ 43111723 քրեական վարույթը և ձեռնարկվել է նախաքննություն:

Քրեական վարույթով նախաքննության ընթացքում որոշում է կայացվել Մարտունի համայնքին տուժող ճանաչելու մասին:

Քրեական վարույթով կատարված նախաքննությամբ պարզվել է, որ Հարություն Գուրգենի Հարությունյանը (ծնված՝.06.01.1955թ., մահացել է՝ 11.08.2006թ.) առանձնապես խոշոր չափերի գույքի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, Մարտունու պետական նոտարական գրասենյակի պետական նոտար Անահիտ Սարիբեկի Ավետիսյանի օժանդակությամբ, 1998 թվականի դեկտեմբերի 21-ին խարդախությամբ հափշտակել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքին պատկանող ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գետափնյա 2-րդ փողոցի թիվ 22 հասցեում գտնվող 6,5 հա մակերեսով մարզադաշտի վրա գտնվող 14.121.990 ՀՀ դրամ արժողության 1980.55 ընդհանուր մակերեսով տիրբունան՝ շենք-շինությունները, դրա նկատմամբ գրանցելով սեփականության իրավունք՝ Մարտունի համայնքին պատճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, իսկ 6,5 հա մակերեսով մարզադաշտի տարածքի նկատմամբ ապօրինի գրանցել է վարձակալության իրավունք: Այսպես, Հարություն Գուրգենի Հարությունյանի մայր Մարգո Արտաշի Հարությունյանին ՀՀ Գեղարքունիքի մարզի

Մարտունի համայնքի Գետափնյա 2-րդ փողոցի թիվ 22 հասցեում գտնվող 6,5 հա մակերեսով մարզադաշտի տարածքը վարձակալության իրավունքով, իսկ 1980.55 ընդհանուր մակերեսով տիրբունայի տարածքը սեփականության իրավունքով պատկանելու վերաբերյալ պետական գրանցում առկա չլինելու պայմաններում, ՀՀ կառավարության 1997 թվականի մարտի 14-ի թիվ 51 որոշմամբ սահմանված Մարտունի համայնքի սեփականության գույքի ցանկում ընդգրկված նշված անշարժ գույքը խաբեությամբ հափշտակելու դիտավորությամբ, Հ.Հարությունյանը որպես ժառանգ, մոր՝ Մարգո Հարությունյանի մահվանից հետո, ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գետափնյա 2-րդ փողոցի թիվ 22 հասցեում գտնվող 6,5 հա մակերեսով մարզադաշտի տարածքը վարձակալության իրավունքով, իսկ 1980.55 ընդհանուր մակերեսով տիրբունայի տարածքը սեփականության իրավունքով իբրև ժառանգություն ընդունելու նպատակով դիմել է Մարտունու պետական նոտարական գրասենյակի պետական նոտար Անահիտ Ավետիսյանին, ով 1998 թվականի նոյեմբերի 03-ին որպես Մարգո Հարությունյանի միակ ժառանգ ճանաչելով Հ.Հարությունյանին և հիմքում դնելով այդ պահին գոյություն չունեցող՝ 1997 թվականի օգոստոսի 10-ից գործած և ստեղծումից շուրջ 6 ամիս առաջ «ԱԳԿՄ» ՊՓԲ ընկերության կողմից 1997 թվականի փետրվարի 14-ին տրված իրավունք վերապահող թիվ 52 գրանցման վկայականը, 1998 թվականի նոյեմբերի 03-ին տրամադրել է կեղծ տեղեկություններ պարունակող թիվ 1092 ժառանգության իրավունքի վկայագիրը, ինչը 1998 թվականի դեկտեմբերի 01-ին ներկայացնելով ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչություն՝ 1998 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գետափնյա 2-րդ փողոցի թիվ 22 հասցեում գտնվող 6,5 հա մարզադաշտի վրա գտնվող 14.121.990 ՀՀ դրամ արժողության 1980.55 ընդհանուր մակերեսով տիրբունայի՝ շենք-շինությունների, նկատմամբ խարդախությամբ գրանցվել է Հարություն Հարությունյանի սեփականության իրավունքը՝ Մարտունի համայնքին պատճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, իսկ 6,5 հա մակերեսով մարզադաշտի տարածքի նկատմամբ ապօրինի գրանցվել է վարձակալություն իրավունք:

Պարզվել է նաև, որ Անահիտ Սարիբեկի Ավետիսյանը (ծնված՝.27.02.1956թ.,մահացել է՝ 09.09.1999թ.) զբաղեցնելով Մարտունու պետական նոտարական գրասենյակի պետական նոտարի պաշտոնը, Հարություն Գուրգենի Հարությունյանի կողմից

խարդախություն կատարելուն օժանդակելու դիտավորությամբ 1998 թվականի նոյեմբերի 03-ին կեղծել է իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող ժառանգության իրավունքի թիվ 1092 վկայագիրը: Այսպես,ՀՀ կառավարության 1997 թվականի մարտի 14-ի թիվ 51 որոշմամբ սահմանված Մարտունի համայնքի սեփականության գույքի ցանկում ընդգրկված ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գետափնյա 2-րդ փողոցի թիվ 22 հասցեում գտնվող 6,5 հա մակերեսով մարզադաշտի տարածքը վարձակալության իրավունքով, իսկ 1980.55 ընդհանուր մակերեսով տիրբունայի տարածքը սեփականության իրավունքով Մարգո Արտաշի Հարությունյանին պատկանելու վերաբերյալ պետական գրանցում առկա չինելու, նրա մահվանից հետո որպես միակ ժառանգ Հարություն Հարությունյանին ճանաչելով և ժառանգության իրավունքի վկայագիր տալով, Մարտունի համայնքի Գետափնյա 2-րդ փողոցի թիվ 22 հասցեում գտնվող 6,5 հա մակերեսով մարզադաշտի տարածքի նկատմամբ Հարություն Հարությունյանի վարձակալության, իսկ 1980.55 ընդհանուր մակերեսով տիրբունայի տարածքի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցելու խոչընդոտը վերացնելով, օժանդակել է իրեն դիմած Հարություն Հարությունյանին Մարտունի համայնքի Գետափնյա 2-րդ փողոցի թիվ 22 հասցեում գտնվող 6,5 հա մակերեսով մարզադաշտի տարածքի նկատմամբ Մարգո Հարությունյանի վարձակալության, իսկ 1980.55 ընդհանուր մակերեսով տիրբունայի տարածքի նկատմամբ սեփականության իրավունքի փաստը հաստատված համարելով այդ պահին գոյություն չունեցող, 1997 թվականի օգոստոսի 10-ից գործած և ստեղծումից շուրջ 6 ամիս առաջ՝ 1997 թվականի փետրվարի 14-ին «ԱԳԿՄ» ՊՓԲ ընկերության կողմից տրված իրավունք վերապահող թիվ 52 գրանցման վկայականով, որպիսի պայմաններում Հ.Հարությունյանին ճանաչելով որպես Մարգո Հարությունյանի միակ ժառանգ, 1998 թվականի նոյեմբերի 03-ին տրամադրել է կեղծ տեղեկություններ պարունակող թիվ 1092 ժառանգության իրավունքի վկայագիրը, ինչը 1998 թվականի դեկտեմբերի 01-ին ներկայացնելով ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչություն՝ 1998 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գետափնյա 2-րդ փողոցի թիվ 22 հասցեում գտնվող 6,5 հա մարզադաշտի վրա գտնվող 14.121.990 ՀՀ դրամ արժողության 1980.55 ընդհանուր մակերեսով տիրբունայի՝ շենք-շինությունների, նկատմամբ խարդախությամբ գրանցվել է Հարություն Հարությունյանի սեփականության իրավունքը՝ Մարտունի համայնքին պատճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային

վնաս, իսկ 6,5 հա մակերեսով մարզադաշտի տարածքի նկատմամբ ապօրինի գրանցվել է վարձակալություն իրավունք:

Վերգրյալ հանցավոր արարքները կատարելու համար Անահիտ Սարիբեկի Ավետիսյանի նկատմամբ 2024 թվականի դեկտեմբերի 23-ին հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 46-255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով (համապատասխանում է 1961 թվականի մարտի 07-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 17-89-րդ հոդվածի 4-րդ մասին և նույն օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասին):

2024 թվականի դեկտեմբերի 23-ին Հարություն Գուգենի Հարությունյանի նկատմամբ հանրային քրեկան հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (համապատասխանում է 1961 թվականի մարտի 07-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածի 4-րդ մասին):

Քրեական վարույթով կատարված նախաքննությամբ հաստատվել է, որ Հարություն Գուրգենի Հարությունյանը և նոտար Անահիտ Սարիբեկի Ավետիսյանը մահացել են:

2024 թվականի դեկտեմբերի 30-ին որոշումներ են կայացվել Հարություն Գուրգենի Հարությունյանի և նոտար Անահիտ Սարիբեկի Ավետիսյանի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը ոչ ռեաբիլիտացնող հիմքով դադարեցնելու մասին:

Հաշվի առնելով, որ Հարություն Հարությունյանի սեփականության և վարձակալության իրավունքների գրանցման համար հիմք հանդիսացած փաստաթուղթը՝ թիվ 1092 ժառանգության վկայագրում նշված հիմքերը գոյություն չեն ունեցել, վարույթով հաստատվել է դրա կեղծ լինելը, ուստի առաջարկում եմ իրավասու դատարան ներկայացնել հայցադիմում՝ նշված ժառանգության վկայագիրն անվավեր ճանաչելու հայցապահանջով և որպես դրանից բխող հետևանք անվավեր ճանաչել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության տարածքային մարմնի կողմից 1998 թվականի դեկտեմբերի 21-ին անշարժ գույքի պետական գրանցման միասնական 4/1 մատյանի 00072 համարի տակ Հարություն Գուրգենի Հարությունյանի Մարտունի քաղաքի կենտրոնական հիվանդանոցի հարևանությամբ գտնվող 1980.55 քմ մարզադաշտի տրիբունայի, 207.4 քմ կաթսայատան և էլ. ենթակայանի նկատմամբ գրանցված սեփականության իրավունքը և որպես դրանից բխող հետևանք անվավեր ճանաչել 2009 թվականի դեկտոմբերի 09-ին թիվ 05-003-508-005 կադաստրային ծածկագրով 1068 քմ

մակերեսով մարզադաշտի տրիբունայի, 142.5 քմ կաթսայատան, 26.1 քմ էլ. Ենթակայանի, 116.1 քմ երկաթ-բետոնե պարսպի, 60.6 քմ տուֆից պարսպի նկատմամբ Արաբո Հարությունի Հարությունյանի սեփականության իրավունքը: Ճանաչել Մարտունի համայնքի սեփականության իրավունքը ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գետափնյա 2-րդ փողոցի թիվ 22 հասցեում գտնվող թիվ 05-003-0508-0005 կադաստրային ծածկագրով 6,5 հա մարզադաշտի վրա գտնվող, 05-003-508-005 կադաստրային ծածկագրով 1068 քմ մակերեսով մարզադաշտի տրիբունայի, 142.5 քմ կաթսայատան, 26.1 քմ էլ. Ենթակայանի, 116.1 քմ երկաթ-բետոնե պարսպի, 60.6 քմ տուֆից պարսպի նկատմամբ:

Միաժամանակ հայտնում եմ, որ հայցադիմում ներկայացնելու կամ չներկայացնելու հարցն անհրաժեշտ է քննարկել ավագանու նիստում և որոշման մասին սեղմ ժամկետում հայտնել մարզի դատախազություն:

Հարգանքով՝

Մարզի դատախազ՝ **Գագիկ Այվազյան**